հավանականությունը կտրուկ մեծանում է: Դժբախտության մեղավորը
տարբեր անուններ ունի՝ ածխածնի օքսիդ, ածխածնի մոնօքսիդ, շմուլ գազ:**

Որտե՞ղ է առաջանում շմուլ գազը

Ծխատար կամ օդատար ուղիներն ամբողջությամբ կամ մասնակի փակելու հետևանքով գազի այրման արգասիքները, հիմնականում շմուլ գազը, բնականոն չեն արտանետվում մթնոլորտ, այլ ներթափանցում են կամ կուտակվում սենքերում: Մարդիկ չեն նկատում դրա ներթափանցումը, քանի որ շմուլ գազը ոչ հոտ ունի, ոչ էլ գույն: Առաջին հերթին այն ազդում է մարդու կենտրոնական նյարդային համակարգի վրա, և թունավորվողն ի վիճակի չի լինում հասկանալու, թե ինչ է իր հետ կատարվում:

Շմուլ գազը գործնականում առաջանում է այրման բոլոր տեսակների դեպքում, էլեկտրակայաններում և ջերմակայաններում վառելիքի այրման, խարույկի այրման, գազի սալիկի և ջրատաքացուցիչի աշխատանքի, ավտոմեքենայի շահագործման ժամանակ, ծխելուց և այլն:

Ազդեցությունն օրգանիզմի վրա

Ինչպե՞ս է շմուլ գազն ազդում օրգանիզմի վրա: Մտնելով թոքերը և այնտեղից էլ արյան պլազմայի մեջ՝ CO-ն թափանցում է երիտրոցիտների մեջ և այնտեղ փոխազդեցության մեջ մտնում հեմոգլոբինի սպիտակուցի հետ, որը թոքերից հյուսվածքների թթվածին մատակարարողն է: Հեմոգլոբինի յուրաքանչյուր մոլեկուլը պարունակում է չորս հեմոպորֆիրային օղակ, որոնց կենտրոնում գտնվում է երկաթի ատոմը, որն ի վիճակի է թթվածնի մոլեկուլը հետադարձ միացնել՝ առաջացնելով, այսպես կոչված, օքսիհեմոգլոբին: Հատկապես երկաթի ատոմին է «նշան բռնում» շմուլ գազը՝ առաջացնելով կոմպլեքս միացություններ (կարբօքսիհեմոգլոբին), որն ընդունակ չէ տեղափոխելու թթվածինը:

Շմուլ գազն ունի արտահայտված առավելություն թթվածնի հանդեպ, այն շատ արագ ռեակցիայի մեջ է մտնում հե-

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ

մոզլորբիկի հետ և առաջացնում ավելի ամուր միացություն, քան օքսիհեմոգլոբինը: Բացի դրանից՝ կարբօքսիհեմոգլոբինի տարաբաժանումն արյան մեջ շատ դանդաղ է ընթանում, և այն աստիճանաբար է կուտակվում: Այդ պատճառով կարբօքսիհեմոգլոբինի կոնցենտրացիան արյան մեջ կարող է աճել մինչև վտանգավոր աստիճանի՝ ածխածնի օքսիդի ոչ մեծ բաղադրություն, ընդամենը 0,07 ունեցող օդը երկար ժամանակ շնչելով: Արյունը կորցնում է թթվածինը հյուսվածքներին տեղափոխելու ունակությունը, ի հայտ են գալիս սուր թթվածնային անբավարարվածության ախտանիշներ:



Կարբօքսիհեմոգլոբինի 2-10 տոկոս կոնցենտրացիայի ժամանակ ակնհայտ նշաններ չեն դիտվում, բայց այդ դեպքում մարդիկ հաճախ բողոքում են գլխացավերից, շուտ հոգնելուց, ախորժակի նվազումից, գրգռվածությունից, վատ քնից, սրտի շրջանում ցավերից, հիշողության և ուշադրության թուլացումից:

Ինչքան երկար է օրգանիզմը գտնվում հյուսվածքների թթվածնային քաղցի պայմաններում, այնքան ծանր են դրա հետևանքները, հատկապես սրտամկանների և գլխուղեղի համար: Այդ պատճառով ծանր թունավորման անմիջական ախտանիշների բուժումը դեռ չի նշանակում լրիվ առողջացում: Հաճախ պատահում է գլխուղեղի կեղևի նեյրոնների քայքայում, 10 թունավորման դեպքերից 7-ում 3 ամսվա ընթացքում կարող են հայտնվել հոգեկան խանգարումներ, հիշողության կորուստ, անձնային փոփոխություններ:



Թունավորման ակնառու հատկանիշները հայտնվում են, երբ արյան մեջ կարբօքսիհեմոգլոբինի բաղադրությունը՝ համեմատած հեմոգլոբինի ընդհանուր բաղադրության հետ, գերազանցում է 20 տոկոսը: 30 տոկոսի ժամանակ ի հայտ են գալիս գլխապտույտ, ուռքերում թուլություն, տեսողության թուլացում: 40-50 տոկոսի ժամանակ՝ գիտակցության մթազնում, 60-70 տոկոսը բերում է մահացության: Ինչքան շատ է շմուլ գազի կոնցենտրացիան օդում, այնքան արագ է կարբօքսիհեմոգլոբինի վտանգավոր համակցությունը հասնում արյանը: Օրինակ՝ 0,1 տոկոս շմուլ գազ պարունակող օդը, կարբօքսիհեմոգլոբինի 40-տոկոսանոց մակարդակին հասցնում է մոտ երեք ժամվա ընթացքում, եթե մարդը գտնվում է հանգիստ վիճակում: Իսկ եթե նա զբաղված է ծանր աշխատանքով, թոքերն ակտիվ օդափոխվում են, և կարբօքսիհեմոգլոբինի առաջացումն ընթանում է ավելի արագ:



Ածխածնի մոնօքսիդի թունավորման հիմնական ախտանիշները

Չանգվածային թունավորումների հիմնական պատճառը գազի տեխնիկայի հետ ոչ պատշաճ վարվելակերպն է և թունավորման ախտանիշները ժամանակին ճանաչելու անկարողությունը: Ի վերջո, նրանք հեշտությամբ շփոթվում են սննդային թունավորումների կամ նույնիսկ գրիպի հետ:

Հիմնական ախտանիշներն են.

- գլխացավը,
- հոգնածությունը,
- հևոցը,
- չոր հազը,
- սրտխառնոցը:

Ավելի լուրջ ախտանիշներն են.

- հավասարակշռության կորուստը,
- տեսողության կորուստը,
- հիշողության խանգարումը կամ գիտակցության կորուստը,

Եվ այս ամենը կարող է տեղի ունենալ նույնիսկ երկու ժամվա ընթացքում:

Ինչպես օգնել CO-ով թունավորվածին

• Ածխածնի մոնօքսիդի թունավորման առաջին կասկածանքով պետք է շտապօգնություն կանչել: Չկա հակաթույն, որը չեզոքացնում է CO-ի գործողությունը: Բժշկական օգնության ողջ իմաստը մնացած աշխատող հեմոգլոբինն առավելագույն չափով թթվածնով հագեցնելն է:

• Մինչև շտապօգնության ժամանումը, անհրաժեշտ է տուժածին հնարավորություն տալ լիարժեք շնչելու, հեռացնել նեղ հագուստը, դուրս բերել մաքուր օդի: Եթե նա գիտակից է և կարողանում է կուլ տալ, հարկավոր է նրան սուրճ կամ թեյ տալ: Կոֆեինը խթանում է ուղեղում գտնվող շնչառական կենտրոնը:

• Տուժածին անպայման պետք է ծածկել վերմակով կամ տաք հագուստով. ածխածնի մոնօքսիդի թունավորման դեպքում ջերմակարգավորումը խախտվում է, և հնարավոր է՝ առաջանա գերսառեցում, նույնիսկ եթե ջերմաստիճանը հարմար է առողջ մարդկանց համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր այս միջոցները կօգնեն միայն CO-ի թույլ թունավորման դեպքում: Ածխածնի մոնօքսիդը շատ ուժեղ թույն է, և ուժեղ թունավորման դեպքում բժշկությունը, ավաղ, անգոր է:

Այսպիսով, ինչ պետք է անել խուսափելու համար շմուլ գազի թունավորումից: Առաջին հերթին գազասարքերը շահագործելու ընթացքում պետք է պահպանել անվտանգության տեխնիկայի տարրական կանոնները, հաճախ օգափոխել գազասարքերի տեղադրման սենքերը: Սակայն հարց է առաջանում, թե ինչպե՞ս ապահովել շմուլ գազի քանակության մշտական հսկողությունը: Շմուլ գազից, թե մեթանից բնակիչների փրկությունը գազասպառման ձայնաազդանշանային համակարգն է:

Այդ պատճառով անհրաժեշտ է ձայնաազդանշանային սարքը միշտ միացրած պահել հոսանքին, հատկապես որ վերջինիս էլեկտրաէներգիայի ծախսը չնչին է (տարեկան կազմում է 500 դրամ):



Տարածաշրջանում Հայաստանի Հանրապետությունը միակ պետությունն է, որտեղ բոլոր գազասպառող բաժանորդների բնակարաններն ապահովված են գազապառման ձայնաազդանշանային համակարգերով: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ ձայնաազդանշանային սարքի գործարկման արդյունքում կանխվել են շմուլ գազից թունավորման կամ բնական գազից օգտվելու հետ կապված այլ դժբախտ պատահարներ:

Թունավորման դեպքերը հիմնականում գրանցվում են ծխատարի անսարքության և/կամ խցանման, գազի վառարանի և ջրատաքացուցիչի անսարքության, ինչպես նաև անվտանգության սարքի անջատված լինելու կամ բացակայության պատճառով:

Եթե հայտնաբերվել է արտահոսք, անմիջապես պետք է լքել տվյալ գոտին:

**ՏԱՐԻԱԿԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ
ԿԱՐՈՂ ԵՆ ՓՐԿԵԼ ԶԵՐ ԿՅԱՆՔԸ:
ՄԻ՛ ԱՆՏԵՍԵՔ ԴԱ:**

ՊԱՀՊԱՆԵ՛Ք ԶԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ:

**ԵՎ ՀԻՇԵ՛Ք
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԵԼԸ
ԿՕԳՆԻ ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԽՆԴԻՐԸ,
ԼՈՒԾԵԼ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՅՆ:**

Սպառողների ազգային ասոցիացիան ցավով
տեղեկացնում է, որ կյանքից հեռացել է
մեզ հետ երկար տարիներ համագործակցած
ու սպառողների շահերի պաշտպանության ոլորտում
մի շարք հաջողություններ գրանցած,
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա
Իրավաբանական անձանց միության
պատվավոր անդամ, գյուղատնտեսության
նախկին նախարար Սերգո Կարապետյանը:



ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սերգո Կարապետյանը (1948-2021)

ստացել է գյուղատնտեսական կրթություն, տարբեր
տարիների աշխատել է որպես որակի հսկիչ,
հերթափոխային քիմիկոս, ավագ ապրանքագետ
առաքման գծով, տեխնիկայի անվտանգության
գծով ինժեներ, գործարանի գլխավոր էներգետիկ,
Արտաշատի պահածոների «Սովխոզ» գործարանի
գլխավոր ինժեներ, գլխավոր տնօրեն,
Ազատի լիասիստեմ ֆորելային տնտեսության
տնօրեն, Արտաշատի պահածոների գործարան
ԲԲԸ նախագահ, գլխավոր տնօրեն:

2010-2016 թթ. ՀՀ նախագահի հրամանագրով
նշանակվել և վերանշանակվել է
ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնում:

ՔԻՄՍԱՔՐՈՒՄ

Քիմաքսքրման առավելություններն ակնհայտ են և անհերքելի: Հագուստն ու տան իրերը մասնագետներին վստահելը և երաշխավորված արդյունք ստանալը գայթակղիչ հեռանկար է: Բայց կան հարցեր, որոնք անշուշտ հետաքրքրում են այս ծառայություններից օգտվողներին: Օրինակ՝ կենցաղային քիմիական նյութերը պարունակո՞ւմ են արդյոք առողջության համար վտանգավոր տարրեր՝ քլորի միացություններ, նավթային թորվածքներ, ֆենոլ և այլն, կամ նման նյութերը կարո՞ղ են զգալի վնաս հասցնել շրջակա միջավայրին:

Գաղտնիք չէ, որ քլորի միացություններ պարունակող ապրանքներից կարող են սկսվել ասթմայի նոպա, կամ առաջ գալ սրտանոթային համակարգի խնդիրներ: Ամոնիակի մեծ չափաբաժինը, որն օգտագործվում է հյուսվածքներից բծերը հեռացնելու համար, հանգեցնում է շնչուղիների բորբոքումների և գլխացավերի: Թունավոր ֆենոլը և դրա ածանցյալները, որոնք հաճախ օգտագործվում են ախտահանման համար, առաջացնում են շնչառության դժվարություններ, ընդհանուր թուլություն և նյարդային համակարգի խանգարումներ: Հետևաբար մաքրող ընկերություն ընտրելիս՝ նախապատվությունը պետք է տրվի լուրջ հեղինակություն ունեցող վստահելի ընկերություններին: Միայն պրո-

ֆեսիոնալները կկարողանան ճիշտ ընտրել չոր մաքրող միջոցը և ճիշտ հաշվարկել դրա չափաբաժինը:

Ի գիտություն

1. Մաքրող ընկերության սարքավորումները մշտապես սերտիֆիկացվում են համապատասխան մարմինների կողմից: Բոլոր մաքրող և չոր մաքրող միջոցները պարբերաբար ստուգվում են:

2. Եթե մաքրող քիմիական նյութերը թունավոր լինեին, ապա դրանցով աշխատող մասնագետները ստիպված պիտի լինեին աշխատանքը կատարել հատուկ պաշտպանիչ արտահագուստներով և դիմակով:

3. Նման ծառայություններից օգտվելիս՝ կարելի է տեղեկություններ հավաքել օգտագործվող նյութերի կազմի, բաղադրության կամ օգտագործման եղանակների ու ցուցումների մասին:

4. Եթե տնային պայմաններում մաքրող միջոցի ընտրությունը հիմնականում ճաշակի ու գնի հարց է, ապա մասնագիտացած սրահներում օգտագործվում են միայն պրոֆեսիոնալ և բազմաթիվ փորձարկումներ անցած նյութեր ու սարքավորումներ:

5. Ուրտում կարևորվում է նաև մասնագիտական ու սպասարկման որակի միջև մրցակցության գործոնը, ինչից շահում է միայն սպառողը:

ԺՈՊԵՊՆԻ ՆԱՍՊՈՒՄԵ

Պոլիմերային ապրանքները, ինչ խոսք, լավ իմաստով գլխիվայր շուռ են տվել մարդկության կենցաղը առավել հեշտացնելով այն ու կրճատելով դրա վրա ծախսվող ժամանակը: Բայց, ինչպես հաճախ է պատահում, առաջընթացի հակառակ կողմում խնդիրներ են, որոնք ծառացել են ամբողջ աշխարհի առաջ:

Ի՞նչ անել, ինչպե՞ս պաշտպանել ու պահպանել մեզ կյանք տվող բնությունը:

Որտեղի՞ց սկսել

Պատասխանը մեկն է՝ կրթությունից: Արդեն մանկապարտեզում երեխան պիտի հասկանա՝ ինչ են թափոնների հեռացումը, վերամշակումը, և գիտակցի դրանց կարևորությունը: Այս նպատակով կրթական հաստատություններին միացել են նաև սոցիալականները, ինչի արդյունքում մեծանում է հասարակության իրազեկվածության մակարդակը:

Երկրորդ կյանք պլաստիկին

Օր-օրի ավելացող ծավալներին զուգահեռ մշտական քննարկման խնդիր է պլաստմասսայե իրերը վերամշակելը կամ, ինչպես սովորաբար ասվում է, դրանց երկրորդ կյանք տալը: Այսօր գրեթե բոլոր խոշոր ընկերություններն ունեն իրենց ռազմավարությունը՝ ուղղված պլաստիկ թափոնների կրճատմանը և տնտեսության զարգացմանը: Խնդիրը դյուրիններից չէ, քանի որ այս նյութն աչքի է ընկնում տեսակների հսկայական բազմազանությամբ: Գիտությունն ու գիտնականները, ասում են, իհարկե, իրենց հեղինակավոր խոսքը, բայց բոլոր գյուտերն անօգուտ են առանց մոլորակի բնակչության: Չէ՞ որ վերամշակելուց առաջ դեռ պետք է հավաքել, լվանալ ու տեսակավորել այդ թափոններն ամբողջ աշխարհում: Իսկ սա մշանակում է, որ.

- սրանց մի մասը մինչև վերամշակվելը պիտի լվացվի ու տաքացվի նոր ձև տալու համար,

- կան տեսակներ, որոնց վերամշակման համար անհրաժեշտ են հատուկ ռեակտորներ և քիմիական նյութեր, որոնք շատ ավելի վնասակար են, քան բուն պլաստմասսան,

- վերամշակման ենթակա պլաստիկ իրերից նախապես պետք է հեռացվեն պիտակները, այլ նյութերից պատրաստված դետալները՝ կափարիչներ, պտուտակներ, նաև սոսինձը, սննդի մնացորդները և այլն:



Թափոնների տեսակավորում

Տեսակավորումը պլաստիկ և այլ թափոնների վերամշակման առաջին քայլն է: Սա կարևոր գործընթաց է, որը որոշում է հետագա գործողությունների արդյունավետությունը, քանի որ յուրաքանչյուր տեսակի նյութ ունի վերամշակման իր մեթոդները: Այդուհանդերձ, վստահեցնում ենք, որ այս հարցի լուծումը կախված է յուրաքանչյուրիցս: Մեր շրջակայքում՝ տանը, ամառանոցում կամ աշխատավայրում, առանձնացնում ենք մի քանի մեծ տարա թղթի, պլաստիկի, ապակու, հագուստի և այլնի համար: Արդյունքը նկատելի է դառնում միանգամից, այն է՝ ավելի մաքուր օվկիանոսներ և ավելի փոքր աղբավայրեր, սրան գումարած կատարած գործի կարևորության ու պատասխանատվության գիտակցումը:

Բայց հաշվի առնենք, որ կան թափոններ, որոնց պատճառած վնասը երբեմն անչափելի է:





Մարտկոցների վերամշակում

Օգտագործված մարտկոցները, կուտակիչները, քսանյութերը և դրանց ֆիլտրերը պարունակում են մարդկանց և վայրի բնության համար վտանգավոր նյութեր: Հետևաբար դրանք պետք է առանձնացվեն կենցաղային թափոններից՝ բնական տարածքներում չհայտնվելու համար:

Վերամշակման արդյունքում առանձնացվում են արժեքավոր բաղադրիչները (վերամշակվող կաուչուկ, գունավոր մետաղներ և այլն), որոնք հետագայում պիտանի են այլ արտադրանքներ թողարկելիս: Օրինակ՝ 1 տոննա մարտկոցից կարելի է ստանալ 270 կգ մանգանի երկօքսիդ, 210 կգ երկաթ, 160 կգ ցինկ, 60 կգ գրաֆիտ:

Արդյունաբերական թափոնների վերամշակում

Արդյունաբերական թափոնները, որ ցանկացած արտադրության անխուսափելի արդյունք են, լուրջ սպառնալիք են շրջակա միջավայրի համար: Ամեն տարի աշխարհում գոյանում է մի քանի միլիարդ տոննա արդյունաբերական թափոն կամ երկրի բնակչության հաշվով տարեկան մինչև մեկ տոննա:

Արդյունաբերական թափոնները վերացնելու 3 եղանակ կա.

- թաղել հատուկ աղբանոցներում,
- այրել,
- վերամշակել:

Այրումը թափոնների հեռացման նվազագույն մախրատորելի տարբերակն է, որը պահանջում է վնասակար նյութերի արտամետումների խիստ վերահսկում և մոխիր պահելու լրացուցիչ տարածքներ: Այրվելիս թափոնների ծավալը կարող է կրճատվել մոտ 10 անգամ, իսկ թողարկված էներգիան՝ օգտագործվել ջեռուցման կամ էլեկտրա-

էներգիա արտադրելու համար: Չնայած հեռացման այս մեթոդի թերություններին, այն լայնորեն կիրառվում է զարգացած երկրներում:

Արդյունաբերական թափոնների վերամշակումը թույլ է տալիս.

- մեծացնել ձեռնարկության շահութաբերությունը և խնայել թափոնների հեռացման համար ծախսերը,
- մաքուր պահել շրջակա միջավայրը, ստորերկրյա ջրերն ու օդը,
- նվազեցնել անտառահատումների ծավալը:

Վերամշակվող հումք

Ցանկացած առարկա ու նյութ, ինչպես կենդանի օրգանիզմները, ունեն իրենց կյանքի ցիկլը: Բայց հնարավոր է դրանց երկրորդ կյանք տալ՝ կազմակերպելով այդ նյութերի վերամշակումը:

Հումքի վերամշակման արդյունքում ոչ միայն պահպանում ենք մեր առողջությունն ու շրջակա միջավայրը, այլև խնայում ենք մի շարք արժեքավոր ռեսուրսներ: Երբեմն մի արտադրությունից ստացված թափոնները մյուսի համար ամենաթանկ հումքն են, հետևաբար վերամշակումը կարող է դառնալ եկամուտի լրացուցիչ աղբյուր: Նաև վերամշակման կազմակերպումը ստեղծում է նոր աշխատատեղեր, նպաստում այս ոլորտի մասնագետների և ամբողջ երկրի տնտեսական զարգացմանը:

Փաստ է, որ որքան բարձր է երկրի տնտեսական մակարդակը, այնքան ավելի շատ աղբ է այն վերամշակում: Ի դեպ, արտասահմանյան մի շարք երկրներ վերամշակում են ոչ միայն իրենց երկրի, այլև այլ երկրներից բերված թափոնները (հիմնականում մետաղական թափոններ):

Ի դեպ, աշխարհը հոգ է տանում ոչ միայն թափոնների մշակման, այլև դրանց առաջացումը կանխելու ուղղությամբ:



Իրականում

Արտադրված ամբողջ պլաստիկի ավելի քան 90 տոկոսը երբեք չի վերամշակվում: Այն հայտնվում է աղբանոցներում, աղբայրիչներում կամ պարզապես բաց բնության մեջ: Փաստենք, որ վերջին տարիներին հաղաղ օվկիանոսում ձևավորվել է պլաստմասսայե թափոնների մի իսկական կղզի, որը կշռում է շուրջ 20 միլիոն տոննա, և որի տարածքը երեք անգամ գերազանցում է Ֆրանսիայի տարածքը (ի դեպ, կղզին շարունակում է մեծանալ):

Հայաստանում

Հայ մասնագետները ևս այն կարծիքին են, որ պլաստիկի վերամշակումը հրատապ է ոչ միայն շրջակա միջավայրի պահպանության առումով, այլև պարունակում է առաջին չիրացված տնտեսական օգուտների ստացման էական ներուժ:

Այս խնդրի լուծմանը միտված առաջին քայլը թերևս պլաստիկի թափոնի տեսակավորումն է, ինչն առավել հեշտացնելու համար Երևանի գրեթե բոլոր վարչական շրջաններում սովորական կանաչ աղբամանների հարևանությամբ տեղադրվում են կապույտ և դեղին աղբամաններ՝ նախատեսված պլաստիկի և թղթի համար:

Տեսանելի ապագայում նախատեսվում է կազմակերպել մարտկոցների, սնդիկի, լամպերի վերամշակում, նաև աղբի վերամշակման ժամանակակից գործարանի ու եվրոպական չափանիշերին համապատասխան աղբավայրի կառուցում:

Չենք դադարում զարմանալ

Ո՞վ կմտածեր, որ սովորական պլաստմասսայե տարաները կարող են հույս դառնալ արվեստի հրաշալի ստեղծագործությունների: Արի ու տես, որ համաշխարհային ժամանակակից լավագույն դիզայներները, քանդակագործներն ու բոլոր



մրանք, ովքեր մտահոգված են այս ցավալի խնդրով, ամեն օր զարմացնում են արվեստի իրական գլուխգործոցներով: Օրինակ՝ պլաստիկե շշերից, կաջուն ժապավենից, սովորաբար ու ներկանյութերից կարելի է պատրաստել հարմարավետ մահճակալներ, ժանյակավոր ծաղկամաններ, ականջօղեր, վզնոցներ, կախազարդեր, կոճակներ, մատանիներ, տարատեսակ տուփեր, արկղեր ու զամբյուղներ, պայուսակներ, նրբագեղ ծաղիկներ, որոնք կարող են օգտագործվել և առանձին, և որպես այլ իրերին ամբողջական տեսք հաղորդող գեղեցիկ դետալներ, նաև մոմակալներ, սպասք, ծաղկաման, լուսամփոփ և այլն:

Վաղուց արդեն զարգացած երկրները պլաստիկե հույճից ստանում են մանրաթել, ճոպաններ, անգամ կահույք: Շատ ընկերություններ արտադրության ընթացքում օգտագործում են հատկապես օվկիանոսներից հավաքված պլաստիկե տարաները՝ մեկ անգամ ևս մարդկության ուշադրությունը հրավիրելով կարևորագույն էկոխնդրին:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ



ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈԼՈՐ ՄԱՐԴՈՒ ԾԵՎՈՒՄ ԵՆ ԱԶԱՏ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ՝ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՐԹՅԱՍԲ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ

Մարդու իրավունքները յուրաքանչյուրիս անքակտելի սեփականությունն են՝ անկախ քաղաքացիությունից, սեռից, ազգային կամ էթնիկ ծագումից, ռասայից, դավանանքից, լեզվից կամ այլ առանձնահատկությունից: Դրանք ներառում են ինչպես հիմնարար իրավունքները, ներառյալ կյանքի իրավունքը, այնպես էլ այն իրավունքները, որոնք մեր կյանքն արժանապատիվ են դարձնում՝ սննդի, կրթության, աշխատանքի, առողջության և ազատության իրավունքներ և այլն:

Մարդու իրավունքների օրենսդրությունն ընդգրկում է նաև հատուկ նորմեր կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի համար: Այս իրավունքները նախատեսված են պաշտպանելու այն մարդկանցից, որոնք կարող են վնասել, հետևաբար դրանք սահմանված են մարդկանց միջև խաղաղ գոյակցություն ապահովելու նպատակով:

Մարդու իրավունքները համընդհանուր են: Ոչ ոք չի կարող զրկվել իր իրավունքներից, բացառությամբ առանձին

դեպքերի, երբ, օրինակ, ազատության իրավունքը կարող է սահմանափակվել, եթե դատարանն անձին մեղավոր ճանաչի հանցագործության մեջ:

Մարդու իրավունքների միջազգային օրենսդրությունը սահմանում է, որ բոլոր պետությունները պարտավոր են հարգել ու պաշտպանել մարդու իրավունքները: Սա ենթադրում է, որ պետությունները պետք է զերծ մնան մարդու իրավունքների ոտնահարումներից, նաև դրական միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար մարդու՝ հիմնարար իրավունքներից օգտվելը:

Մարդու հիմնարար իրավունքներն են.

- աշխատանքային արդար և բարենպաստ պայմանների իրավունքը,
- սոցիալական ապահովության իրավունքը,
- համարժեք կենսամակարդակի և ֆիզիկական և մտավոր առողջության առավելագույն հասանելի մակարդակի իրավունքը,
- կրթության իրավունքը,



- մշակութային կյանքին մասնակցելու և գիտական առաջընթացի արդյունքներից օգտվելու իրավունքը,
- ազատ տեղաշարժի իրավունքը,
- օրենքի առջև հավասարության, արդար և հրապարակային դատավարության, մտքի, խղճի և դավանանքի ազատության, կարծիքի արտահայտման ազատության իրավունքները և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանությունն արգելում է.


- կյանքից կամայական զրկելը,
- խոշտանգումները և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը,
- ստրկությունը և հարկադիր աշխատանքը,
- կամայական ձերբակալումը,
- պատերազմի քարոզչությունը,
- ռասայական կամ կրոնական ատելության խոսքը:

Միևնույն ժամանակ մեզանից յուրաքանչյուրը, ունենալով սեփական իրավունքներ, պետք է հարգի այլոց իրավունքներն ու պայքարի դրանց համար: Եվ իմանալով սեփական իրավունքները, երբեք չի կարելի մոռանալ պարտավորությունների մասին: Սա նշանակում է, որ, օրինակ, եթե քաղաքացին իրավունք ունի աշխատելու

կամ իր երեխային կրթելու, ապա պետությունը պարտավոր է ստեղծել աշխատատեղեր կամ կազմակերպել դպրոցների համակարգ:

Ինչու է կարևոր սեփական իրավունքների իմացությունը

Պատասխանը հստակ է. առանց սեփական իրավունքների իմացության անհնար է լինել ազատ, ուժեղ և պատասխանատու քաղաքացի: Նրանց, ովքեր չգիտեն իրենց իրավունքները, հեշտ է խաբել, վիրավորել կամ մոլորեցնել: Հետևաբար երեխաներն անգամ պիտի վարժվեն ապրել ամրագրված օրենքներով՝ ոչ մի իրավիճակում չխախտելով այլոց իրավունքները:



ԻՇԱՌՎՈՒՅՏ ԴԵՂԱՏՈՒ

Melilotus officinalis (L.) Pall.

Հայկական փարանոսները - դաոնոսայ,
եղիսար, նշահամունք



Դեղաբույսի նկարագրությունը: Բակլազգիների կամ թիթեռնաձողկավորների ընտանիքին պատկանող, 50-150 սմ բարձրության, երկամյա խոտաբույս է: Տերևները բարդ եռմասնյա են, կոթունավոր: Ծաղկաբույլը ողկույզ է, ծաղկապսակը՝ դեղին, պտուղը 1-2 սերմ պարունակող ունդ է, սերմերը՝ ձվաձև, դեղնականաչավուն: Արմատը լավ զարգացած է, դեղնասպիտակավուն: Ծաղկում է հունիսից սեպտեմբեր, սերմերը հասունանում են հուլիսից ուշ աշուն: Բույսը չորակայուն է, ցրտադիմացկուն: Պտղակալում է կանոնավոր: Աճում է գրեթե բոլոր տեսակի հողերում, վատ է տանում միայն գերխոնավությունը: Բազմանում է սերմերով:

Քիմիական բաղադրությունը: Բույսի մեջ հայտնաբերված է գլիկոզիդ մելիլոտոզիդ, որը հումքի չորացման հետևանքով վերածվում է 0,4-0,9 տոկոս կումարինի, ինչով պայմանավորված է իշաովույտի դուրեկան հոտը: Վերգետնյա մասը պարունակում է նաև դիկումարին, կումարաթթու, մելիլոտին, մելիլոտոլ, մելիլոտաթթու, ցիմարին, վիտամիններ C, E, կարոտին, դաբաղանյութեր, խոլին, մինչև 17 տոկոս սպիտ, պուրինային ածանցյալներ, եթերայուղ, լորձ, խեժանյութ, ֆլավոնային գլիկոզիդ, սերմերը՝ մինչև 42 տոկոս ճարպայուղ:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով ծաղկման ընթացքում հավաքում են բույսի գլխամասերը ծաղկաբույլերով ու տերևներով, նաև կողային ընձյուղները: Հումքը չորացնում են արևի տակ: Ունի դառը համ և դուրեկան հոտ: Պահում են ապակյա ամաններում կամ թիթեղյա տուփերի մեջ թղթով փաթաթված: Պիտանի է մոտ 2 տարի:

Դեղաբույսն օգտագործվում է գլխացավի, գլխի փակ վնասվածքների, անքնության, մելանխոլիայի, վերջույթների թուլության և անդամալուծության, մկանային սպազմների, աչքի բորբոքումների, քաղցկեղի, ականջի ցավերի, ստամոքսի սուր և քրոնիկական բորբոքումների և այլնի ժամանակ: Տեղին է նշել, որ մեծ չափաբաժնով կամ երկարատև ընդունումը կարող է առաջ բերել գլխացավ, գլխապտույտ, փախում, քնկոտություն, ներքին օրգանների, մկանների և ենթամաշկային ճարպաշարակցական շերտի արյունազեղումներ և այլն:

Կիրառման եղանակները: Թուրմ պատրաստելու համար 2 թեյի գդալ հումքը 2-3 ժամ թրմում են 2 բաժակ եռման ջրում, ընկում 1 օրում 4 անգամ: Թրջոցների համար 2 թեյի գդալ հումքը 20 րոպե թրմում են 0,5 լ եռման ջրում կամ 2 թեյի գդալ հումքը 30 րոպե թրմում են փակ ամանի մեջ, 200 մլ եռման ջրում, ընկում 1-ական ճաշի գդալ օրը 3-4 անգամ: Եփուկ պատրաստելու համար 20 գ հումքը 30 րոպե 200 մլ ջրում եռացնելուց հետո հովացնում են, քամում ու ընկում 1-ական ճաշի գդալ օրական 3 անգամ:

Այլ օգտակար հատկանիշներ: Իշաովույտով համեմուն են պանիրը, ծխախոտը, սպիրտային խմիչքները, բուրմունք տալիս օճառին: Բույսը տալիս է առատ նեկտար և ծաղկափոշի:

Արշավիր Թորոսյան
Հայաստանի դեղաբույսերը
Երևան, 1983

ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հաճոյախոսությունները, որոնք արգահայտում են մարդու դրական վերաբերմունքը դիմացինի նկատմամբ, արվում են ամենուր և ամեն քայլափոխի:

Եվ ոչ ոք սովորաբար չի մրաժան, թե ինչպես է դա հնչում վարվելակարգի գրե սանկյունից:

Ինչպիսին պետք է լինեն հաճոյախոսությունները, որպեսզի հաճելի զգացողություններ առաջացնեն երկուսս:

Եվ այսպես

Կանայք սիրում են հաճոյախոսություններ իրենց արտաքինի մասին: Նրանց դուր են գալիս գովաբանությունները խելքի, կրթվածության և տարբեր հմտությունների վերաբերյալ: Կանայք միշտ պատրաստ են լսել այն մասին, թե որքան լավ ու գեղեցիկ են կատարում այս կամ այն աշխատանքը:

Հաճոյախոսությունների նկատմամբ այլ են տղամարդկանց «պահանջները»: Նրանք առանձնահատուկ սիրով են լսում գովեստները խելքի, ուժի ու հատկապես առնական կազմվածքի մասին:

Ի դեպ

Կան նրբություններ, որ պետք է հաշվի առնել ցանկացած դեպքում:

Օրինակ 1: Դուք այսօր այնքան գեղեցիկ եք:

Կարծես ամեն ինչ կարգին է, մինչև այն պահը, երբ այս գովեստի հասցեատերը սկսում է մտածել, որ այլ ժամանակ հավանաբար ինչ-որ բան այն չի եղել:

Օրինակ 2: Դուք այնքան խելացի եք աղջկա (տղայի) համար:

Սա արդեն սեքսիզմ է: Վաղուց ժամանակն է ընդունելու, որ սեռը որևէ կերպ չի ազդում մարդու մտավոր ունակությունների վրա:

Օրինակ 3: Երբեք ուրիշի հետ այդքան լավ չեմ զգացել:

Վարվելակարգի առումով սա վատ հաճոյախոսություն է, քանի որ այդ մասին խոսող անձն ինքնաբերաբար գերազնահատում է իրեն:

Ինչպես արձագանքել

Ցածր ինքնագնահատական ունեցող մարդիկ հաճախ ամաչում են և հերքում հաճելի խոսքերը: Սա անտեղի է: հարկավոր է սիրել ու հարգել սեփական անձը:

Հավասարազոր անընդունելի է մեծամիտ արձագանքը, որը հնչում է մոտավորապես այսպես՝ գիտեմ կամ դա նորություն չէ և այլն:

Ամենահարմար տարբերակը պարզապես շնորհակալությունն է: Կամ էլ կարելի է ուղղակի փոխադարձել. «Շնորհակալություն, դու նույնպես հիանալի տեսք ունես»:

Ամենակարևորը

Հաճոյախոսության ամենակարևոր «բաղադրիչը» անկեղծությունն է, որը ոչ մի ընդհանուր բան չունի շոդորությունների հետ: Հակառակ դեպքում ճիշտն ուղղակի լռելն է:





Նմառ 2021

Ամառային նորաձևությունն աչքի է ընկնում գունագեղությամբ, աչք շոյող ծաղկային ձևավորումներով, գործվածքների թեթևությամբ: Նորաձևությունն այնպիսին է, ինչպիսին ինքը՝ ամառն է՝ ջերմ ու լուսավոր:

Կանանց առաջարկվում են թափանցիկ կամ ցանցկեն դետալներով թեթև զգեստներ՝ գույնագույն գոլերով, երբեմն լանջաբացվածքով ու բաց ուսերով:

Այս ամառ կանայք առավել նորաձև են զգեստների տարբեր հատվածների բացվածքներով, որոնց արդյունքում առավել ընդգծվում են նրանց հնայքն ու սեքսուալությունը: Եվ բնականաբար ամառն ամառ չի լինի առանց շորտերի ու տոպերի, որոնք բնական գործվածքներից են՝ հարմար ամառային շոգ օրերին դիմակայելու:



Պայուսակներ

Ինչպիսին ամառային հանդերձն է, այնպիսին էլ դրանք լրացնող պայուսակներն են: Պայմանավորված գործառնությամբ՝ մեծ են, ինչպես պարկերը, և փոքր, ինչպես դրամապանակները, զարդարված են արքեսուարներով, լոգոներով ու երկրաչափական պատկերներով:



Կոշիկներ

Ամառը նաև հանգստի սեզոն է, ուստի կոշիկները պետք է լիովին հարմարեցված լինեն թե՛ հանգստին, թե՛ հանգիստ աշխատելուն: Հետևաբար դիզայներները նախապատվությունը տալիս են անկրունկ, հաճախ պլատֆորմներով մոդելներին, որոնք զարդարված են ամառային ուրախ դետալներով՝ ճարմանդներ, շղթաներ, թիթեռնիկներ և այլն:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՆՈՐԱԶԵՎՈՒԹՅՈՒՆ

Տղամարդիկ այս ամառ ավելի քան նորաձև են նեղ, մարմինն ընդգծող վերնաշապիկներով և զինվորական հանդերձ հիշեցնող տաբատներով, վառվռուն պրինտներով շապիկներով և թեթևակի լայն շորտերով: Գույները մեղմ են, հատկապես նորաձև են կապույտի ու շագանակագույնի երանգները:



Կոշիկներ

Ոճային տղամարդու զգեստապահարանի կարևոր դետալներից են կոշիկները: Դասական մոդելները կոստյումների հետ են համադրվում, մարզականները՝ ամենօրյա հանդերձի: Կարևորը բնական նյութից լինելն է հատկապես ամառային տաք օրերին:



Պայուսակներ

Պայուսակներից առավել հարմարը թերևս ուսապարկերն են, որոնք թեթև, փափուկ, բնական գործվածքից են՝ հարմար ամառվա տապին ազատ տեղաշարժվելուն թե՛ աշխատավայրում, թե՛ հանգստի ժամերին: Նաև նորաձև են գոտի-պայուսակները, որոնք թեև հարմար են, քանի որ ձեռքերը չեն զբաղեցնում, սակայն տարողունակ չեն: Ինչ խոսք, չեն մոռացվել նաև պարկ-պայուսակները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2021 թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 2

«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ. ՇՄՈԼ ԳԱԶ՝ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԱՐԵՎԱՆ..... 16

ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 20

ՔԻՄՄԱՔՐՈՒՄ ,,..... 21

ՉԴԱԴԱՐՈՂ ԱՀԱԶԱՆԳ..... 22

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....26

ԻՇԱՌՎՈՒՅՏ ԴԵՂԱՏՈՒ 28

ԷԹԻԿԵՏ. ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 29

ԱՄԱՌ 202130

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
Թեժ գիծ՝ (010) 24-92-04
E-mail: info@armconsumer.am;
nationalconsumerassociation@yahoo.com
URL: http://www.armconsumer.am

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 2 մամուլ
Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԷՅ ԷՄ
տպագրատանը
Բաժանվում է անվճար
Գրանցման վկայականը՝ 2215
Հղումը ՍՊԱՌՈՂ-ին պարտադիր է

ԷՅԻՋԻՍԵՐԿԻՍ



- Բնակարանների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկում:
- Կենցաղային օբյեկտների տեխնիկական սպասարկում:
- Արտադրական նշանակության օբյեկտների տեխնիկական սպասարկում:
- Գազօգտագործող սարքավորումների վերանորոգում և կարգաբերում:
- Գազափնտրիչ սարքերի արտադրություն (LD-1M):
- Ձայնաազդանշանային անվտանգության համակարգի վերանորոգում:
- Ընկերության աշխատակիցների ուսուցում և վերապատրաստում:



Մեր աշխատանքը Ձեր անվտանգության երաշխիքն է


ՀՀ, 0021, ք. Երևան, Ադոնցի 10

Հեռ.՝ +374 10 20 94 60

Ֆաքս՝ +374 10 23 65 01

Էլ. փոստ՝ aeg@aegservice.am

Կայք՝ www.aegservice.am



www.armconsumer.am